**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հուլիսի 2022թ. N 290-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Արզնի գյուղի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում, փուլ 1» աշխատանքներն իրականացնելու նպատակով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն փոխարինվող հատվածի սխեմատիկ տեղադիրքային հատակագծի:

2.«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

04 հուլիսի 2022թ. N 291-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆ ՈՒ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հաշվի առնելով «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հունիսի 28-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված բնակելի տունն ու պարիսպը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.001315 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, 129.1 քմ արտաքին մակերեսով այգետնակը, 6.5 քմ մակերեսով

ատիճանահարթակը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, իսկ 2.1 քմ մակերեսով սանհանգույցը և 1.9 քմ մակերեսով պարիսպը կառուցված են 2003-ից 2007 թվականներին, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված 2022 թվականի հունիսի 16-ի N Աբ-1166 արխիվային տեղեկանքը, չափագրման հատակագծերն ու Գուրգե Գրիգորի Մանուկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նուռնուս այգետարածքի թիվ 2 թաղամասի թիվ 51 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել՝

Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Սևան թաղամաս 2-րդ փողոց 51:

2.Ճանաչել Գուրգեն Գրիգորի Մանուկյանի սեփականության իրավունքը իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0155-0025) փաստացի ավել օգտագործվող 0.001315 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3. Գուրգեն Գրիգորի Մանուկյանին պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Սևան թաղամաս 2-րդ փողոց 51 հասցեի (ծածկագիր՝ 07-051-0155-0025, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր)՝ 2022RN5M5W) 0.051315 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 129.1 քմ արտաքին (98.67 քմ ներքին) մակերեսով այգետնակը, 6.5 քմ մակերեսով աստիճանավանդակը, 2003 թվականին կառուցված 2.1 քմ արտաքին (1.1 քմ ներքին) մակերեսով սանհանգույցը և 2007 թվականին կառուցված 1.9 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4.Գուրգեն Գրիգորի Մանուկյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 3412,8 (երեք հազար չորս հարյուր տասներկու ամբողջ ութ տասնորդական) դրամ՝ 2.1 քմ մակերեսով սանհանգույցի և 1.9 քմ քմ մակերեսով պարսպի օրինականացման վճար:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.051315 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

7.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ՍՎ ՉԱՓԱԳՐՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված հատակագիծը:

8. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 04
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

04 հուլիսի 2022թ. N 292-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հայտը՝ ***որոշում եմ.***

1.«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նոտնուսի ամառանոցների ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝

1)նախագիծը ներկայացնել համաձայնեցման.

2)կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Signed by: BALASYAN HAKOB 3009590148    Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 04
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հուլիսի 2022թ. N 293-Ա

### «ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԻՄՈՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Արա Աբրահամյանի հայտը և վճարման անդորրագիրը՝ ***որոշում եմ.***

1.«Արա Աբրահամյան Սիմոնի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43064836) տալ ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 35 շենքի դիմաց հասցեում գտնվող 24 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 04
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հուլիսի 2022թ. N 294-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերի՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 07-003-0025-0057, 0112-ից ծածկագրով 0.54034 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 28/89:

2.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ՔԱՂ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հատակագիծը:

3.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ հասցեի գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հուլիսի 2022թ. N 295-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ **որոշում եմ**.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման հավելվածի 2, 3 և 6 հատվածներում կատարել վերաբաշխում՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2022թ. N 296-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության դիմումը, գրությունն ու լիազորագիրը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր (Միացման պատվեր N 75362111, N 7549-ԷՄ, 10 կՎ) հասցեի Իրինա Գուրգենի Սարգսյանին պատկանող անշարժ գույքի էլեկտրամատակարարման արդիականացման աշխատանքների կատարման (կառուցման) նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 06
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2022թ. N 297-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ ու 51-րդ կետերի և հիմք ընդունելով Հրանտ Գալուստի Խոջայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հրանտ Գալուստի Խոջայանին սեփականության իրավունքով պատկանող քաղաք Բյուրեղավան Հարոյան փողոցի աջակողմյան մաս, 07-003-0038-0001-051 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին (վկայական՝ 2091982, տրված 2006 թվականի մարտի 27-ին) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/97:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2022թ. N 298-Ա

## «10 ԻՔՍ ԹՐԵՅԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով «10 ԻՔՍ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.«10 ԻՔՍ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հարկ վճարողի հաշվառման համար 03561335) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 1/8 հասցեում գտնվող 196 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2022 թվականի մայիսի 06-ից մինչև սեպտեմբերի 30-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 08
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2022թ. N 299-Ա

«ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Աննա Վարդանյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.«Աննա Վարդանյան Արարատի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43218643) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 26 շենքի դիմաց հասցեում գտնվող 6 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2022 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 08
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2022թ. N 300-Ա

### «ՆԱՐԻՆԵ ԾԱՏՈՒՐՅԱՆ ՂԵՎՈՆԴԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Նարինե Ծատուրյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.«Նարինե Ծատուրյան Ղևոնդի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար 43068784) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 29 շենքին հարակից հասցեում գտնվող 30 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2022 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզ, համայնք)
# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
N21 04 հուլիսի 2022 թ.

Տրված է կառուցապատող «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»ՓԲԸ (ՀՀր Երևան 66ա 011 300-186)
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը,

Կոտայքի մարզի « Արզնի գյուղը ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում Փուլ 1»
ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

(II կատեգորիա) օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ---------------------- տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «Աշխատանքային նախագիծ»,«Ղազարյան Շին » սահմանափակ պատասխանատվությամբ
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

ընկերության կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) ______ փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
«Ջրարփի » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

(լիցենզիզ՝ N 16970-2 )
(նշել փորձաքննության տեսակը)

կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ ______ ս.,
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների
Բյուրեղավան համայնքի հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 (տասներկու) ամիս ընթացքում
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը
[] ավարտական ակտի տրամադրումից----------------------- ամսվա ընթացքում
[] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է ______ թերթից, կարված և դրոշմակնքված է ______ կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) ______________________________________ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու ______________________________ և այլ մարմնի

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ______________________________ հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

______________________________

______________________________ :

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ______________________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ______________________________ քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ______________________________ տրված սույն

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ______________________________:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Հ. ԲԱԼԱՅԱՆ

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ. Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Հեռ. 022265205

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(մարզը, համայնքը)

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
# (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 23 04 հուլիսի 2022թ.

Օբյեկտ Բյուրեղավան համայնքի Նուռնուս ամառանոցների ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

______________________________________________

(համառոտ բնութագիրը, հզորությունը)

______________ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

______________ *«Աշխատանքային նախագիծ», (II կատեգորիա), միջին ռիսկայնության աստիճան*

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան Նուռնուսի ամառանոցային հատված*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

______ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ ______________________

բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Կառուցապատման *հայտ* ______________

(կառուցապատման նախաձեռնման ՀՀ օրենսդրությամբ սահմանված

______________________________________________

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը ______________ *12ամիս* ______________

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է *Բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նախատեսվող և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը *Ըստ նախագծի* ______________

(հողամասի սահմանները կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը *Ամառանոցային տարածք* ______________

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները ______________ *համայնքային նշանակության ճանապարհ* ______________

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, *հարակից տարածքով անցնող ստորգետնյա մալուխ, ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր, գազամատակարարման համակարգ*

կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր ______

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) *չկան*

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ *նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի*

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

*ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան բոլոր միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները բոլոր պարագծային առաջադրանքի, բոլոր միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ*

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ինչպես քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) ______

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) ______

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) ______

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%) ______

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ______________________

9.7. այլ պահանջներ ______________________

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը *չկա անհրաժեշտություն*______________________

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները _*չկան*______________________

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ ***համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ***

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում Կցվում է ___Համապատասխան կազմակերպության ____ ***համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ***
______________________
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Կցվում է _***համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ*** ______________________
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում Կցվում է __***համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ***
______________________
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը Կցվում է _***համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ*** ______________________
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ___ ______________________

12.6. աղբահանություն ______________________

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում ______________________
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում *ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը*
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր *Մետաղյա խողովակներ, ասֆալտբետոն, խիճ և այլն՝ ըստ նախագծի*
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին գույների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ ______Ըստ նորմերի
______________________
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ _____*ապահովել հակահրդեհային նորմերով պահանջները*______

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

______________________

19. Շրջակա միջավայրի պահպանում

*չիրականացնել վտանգավոր միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, բույր գործող նորմերի*

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

*չիրականացնել վտանգավոր միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, բույր գործող նորմերի*

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

______ *«Աշխատանքային նախագիծ» , 12 (տասներկու) ամիս*

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

*Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ դրա կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

______________________

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

*ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

*նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ իրածենտրական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

______________________

27. Այլ պայմաններ

______________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

______________________ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

Ա.Եղիազարյան

հեռ. 0222 6 52 03

**Հավելված N 1**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի հուլիսի 04–ի N 295 - Ա որոշման

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 77 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ 2-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| Բաժին | խումբ | դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տարե կան | Փոփոխ. + / - | տարի |
|---|---|---|---|---|---|---|
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 1000,0 | +500,0 | 1500,0 |
| 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 600,0 | +1000,0 | 1600,0 |
| 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 44075,0 | -1500,0 | 42575,0 |

**Հավելված N 2**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի հուլիսի 04–ի N 295 - Ա որոշման

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 77 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ 2-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| *Տողի N* | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված | Տարե կան | Փոփոխ. + / - | Տարի |
|---|---|---|---|---|---|
| *4232* | Համակարգչային ծառայություններ | 4233 | 1170,0 | +150,0 | 1320,0 |
| *4251* | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 9800,0 | -600,0 | 9200,0 |
| *4264* | Տրանսպորտային նյութեր | 4264 | 3000,0 | +100,0 | 3100,0 |
| 5113 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 93490,0 | -1500,0 | 91990,0 |
| 5129 | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 8048,0 | +1000,0 | 9048,0 |
| 5134 | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 29000,0 | +500,0 | 29500,0 |

**Հավելված N 3**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի հուլիսի 04–ի N 295 - Ա որոշման

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 77 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ 6-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| Բաժին | խումբ | դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված | Տարեկան | Փոփոխ. + / - | տարի |
|---|---|---|---|---|---|---|---|
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում, որից | | 113846,0 | 0,0 | 113846,0 |
| | | | Համակարգչային ծառայություններ | 4232 | 170,0 | +150,0 | 320,0 |
| | | | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 800,0 | -150,0 | 650,0 |
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ, որից | | 300,0 | +500,0 | 800, 0 |
| | | | Պարտադիր վճար | 4823 | 300,0 | +500,0 | 800, 0 |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ, որից | | 65060,5 | 0.0 | 65060,5 |
| | | | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 9000,0 | -600,0 | 8400,0 |
| | | | Տրանսպորտային նյութեր | 4264 | 500,0 | +100,0 | 600,0 |
| | | | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 1000,0 | +500,0 | 1500,0 |
| 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն, որից | | 600,0 | +1000,0 | 1600,0 |
| | | | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 0,0 | +1000,0 | 1000,0 |
| 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ, որից | | 44075,0 | -1500,0 | 42575,0 |
| | | | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 22000,0 | -1500,0 | 20500,0 |

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզը, համայնքը)

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 23
06 ՀՈՒԼԻՍԻ 2022 թ.

Տրված է կառուցապատող « Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ հեռ. 041511180, 055599940 -ին
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր (միացման պատվեր 75362111 10կՎ) հասցեի Իրինա Գուրգենի Սարգսյանին պատկանող անշարժ գույքի օբյեկտի
(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

Էլեկտրամատակարարման (արդիականացման) կառուցման

աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետազոտանախագծային փաստաթղթերը մշակվել են Աշխատանքային նախագիծ
(նախագծային փաստաթղթերի փուլը,

«ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի լիցենզիա N 17208 , տնօրեն՝ Ա. Շահինյան կողմից:
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 (տասներկու) ամսվա ընթացքում:
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

_________________________ Հ. Բալայան
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ. Ա. Եղիազարյան